

**ՂԵՎՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ  
ԲԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(Բառարարդման կաղապարներ)**

**Լ. Լ. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

Ղևոնդ Վարդապետը (Ղևոնդ Մեծ կամ Ղևոնդ Պատմիչ) 8-րդ դարի հեղինակ է. նա սերունդներին թողել է «Պատմութիւն» (կամ «Ժամանակագրութիւն») աշխատութիւնը<sup>1</sup>. Նրա երկի լեզվի քննութիւնը կարող է բացահայտել հետազոտական հայերենի դարգացման միտումներն ու լեզվի քերականական կառուցվածքի տարժամանակյա յուրահատկութիւնները<sup>2</sup>:

Ղևոնդն իր հեղինակային-անհատական կնիքն է դրել ժամանակի լեզվի վրա՝ իր նպատար բերելով գրարարի բառային կազմի համալրման գործում. նրա մատյանի միջոցով մեր լեզվին անցել են մի շարք բառային փոխառութիւններ, դարձվածային միավորներ ու գանազան ոճեր:

Բանասիրութիւնն արդէն ցույց է տվել Ղևոնդի մատյանի և հին հայերենով գրված մշակութային հուշարձանների լեզվական աղբյւրները<sup>3</sup>:

8-րդ դարի հայերենի բառային կազմի վերաբերյալ որոշակի պատկերացում կազմելու համար Ղևոնդի երկի հինհայերենյան բառաշերտի կողքին անհրաժեշտ է ցույց տալ նաև բառային փոխառութիւններն<sup>4</sup> ու հեղինակային նորակազմութիւնները:

Ներկա հոգվածի շրջանակներում մենք կփորձենք քննել Ղևոնդի երկի այն նորակազմութիւնները, որոնք ստեղծվել են բառարարդման կաղապարներով:

Բարդութիւն իմաստակառուցվածքային պլանում կարելի է առանձնացնել լեզվական հակադրվող երկու միավոր՝ անկախ առկա ձևույթների քանակից<sup>5</sup>. Այդպիսի անդամատումը սկսելով ոչ թէ բաղադրյալ, այլ բաղադրելի միավորներից՝ կարելի է ցույց տալ վերջիններիս բաղադրման ընթացքը՝ բառաքերականական ձևույթների բառակազմական քայլերը<sup>6</sup>:

Այժմ փորձենք Ղևոնդի նորակազմութիւնները դասակարգել ըստ բառարարդման կաղապարների՝ տարբերակելով համադրական և վերլուծական տեսակները:

1) Համադրական բարդություններ: Բաղադրյալ բառի կաղապարի մեջ տարբերում են մի-

1 Տե՛ս Ղևոնդեայ Վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

2 Հետազոտական հայերենի կառուցվածքային փոփոխութիւնների գիտական նկարագիրն ըստ ամենայնի տվել է Ա. Այտրեյանը՝ դրանք «մեծ մասամբ նայերնիացային համեմատութեամբը նորերուկ բաներ» համարելով (Ա. Այտրեյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1987, էջ 124):

3 Ն. Ակիմեան, Ղևոնդ Երէջ Պատմագիր («Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1929, էջ 596—97), Խորենացի և Ղևոնդ («Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 133—54):

4 Տե՛ս մեր՝ «Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» Երկի բառային փոփոխութիւնները» հոգվածը («Էջիածին», 1998, 2, էջ 54—58):

5 Բառային մակարդակում այդպիսի անդամատում կատարելու և բառակազմական հնարավոր կաղապարներ ստանալու նպատակով բարդութիւն կառուցվածքային տարրերը կարելի է նշանակել հետևյալ պայմանական առաերով՝ S—սկզբնահիմք, a—ածանց, f—քերականական մասնիկ՝ թևույթ, j—հոգակապ, p—նախդիր (տե՛ս Լ. Հովսեփյան, Գրարարի բառակազմութիւնը, Ե., 1987, էջ 56): (Ղևոնդի նորակազմութիւնների կառուցվածքը քննելիս մենք կիրառելու ենք Լ. Հովսեփյանի առաջարկած բառակազմական կաղապարները):

6 Գ. Զատուկյանը բառակազմական քայլերի հաջորդականութեան բացահայտումը կապում է բառակազմութեան գիտամիկ ըմբռնման հետ, ի հակադրութիւն Երևոյթի ստատիկ ըմբռնման, որի վեպտում «առաջնային քննութեան առարկա են բաղադրյալ՝ ածանցյալ ու բարդյալ բառերը, որպէս առկա կազմութիւններ» (տե՛ս նրա «Ժամանակակից հայերենի բառակազմութիւն և իմաստարանութիւն», Ե., 1989, էջ 162):

ջուկային և ամփրուկային բաղադրիչներ. ընդ որում բարդության տեսակները որոշվում են բաղադրիչների բնույթով:

Բարդության կառուցվածքում միջուկի դերով հանդես է գալիս արմատը, որ ձևավորում է բառակազմական հիմք, իսկ որպես ամփրուկային բաղադրիչ՝ համատիպ որևէ միավոր կամ կախյալ որևէ ձևույթ: Երկրորդ բաղադրիչը կոչվում է ածանց, ածանցավոր բառի սերունդ՝ ածանցում: Համատիպ բաղադրիչներով բաղադրությունը կոչվում է բարդություն, դրա սերունդը՝ բարդում<sup>7</sup>:

Բարդության յուրաքանչյուր խմբում առանձնացվում են հիմնակաղապարներ և դրանց մասնակաղապարները (ենթակաղապարները): Հիմնակաղապարը բնութագրվում է բաղադրիչների քանակով ու կազմով, մասնակաղապարը՝ ըստ հիմնակաղապարի կազմիչ միավորների կրած փոփոխությունների, ինչպես նաև սկզբնահիմքի խոսքիմասային արժեքի<sup>8</sup>:

Հայագիտության մեջ համադրական բարդությունների կաղապարները սովորաբար ներկայացնում են երկու հիմնական՝ հոդակապով և անհոդակապ կառուցվածքային տեսակներով:

Ա. Հոդակապով բարդություններ: Հոդակապով բարդությունների կաղապարները գրաբարի բառակազմական գործընթացում շահադանց կենսունակ են:

Ղևոնդի նորակազմությունների մի զգալի մասն ստեղծվել է այս կաղապարով:

Այդ նորակազմությունները կարելի է խմբավորել՝ ենկնով սերող հիմքերի արտահայտության եղանակից՝ պա՞րզ ևս դրանք, թե՞ ածանցավոր:

Մեղու պարզ (առաջնային) հիմնով բարդությունների կաղապարը կունենա հետևյալ բանաձևը՝ SJS, ինչպես՝ ղղեկապարիսպ (40), խոհափխտ (21), մաււււմէջ (19)<sup>10</sup>:

SJS կաղապարն ունի SJS մասնակաղապարը. այսօրինակ բարդությունների պարզ (առաջնային) հիմքը հանդես է գալիս հնչյունափոխված ձևով (Տ):

Քննության ենթակա բնագրում հանդիպում են հետևյալ նորակազմությունները՝ բազմախնամ (107), ղղեկաձև (127), զրավաստակ (128), կանխագուշակ (97), հրագագաթն (161), ստապատում (144):

Այս մասնակաղապարով են ստեղծվել նաև այն բառերը, որոնց առաջնային հիմքն աննշանակ է, և որոնք բարդության մեջ կորցրել են -f մասնիկը (կամ ածանցը). հանդիպում է դժոխաձև (135) նորակազմությունը:

SJS հիմնակաղապարի մի մասնակաղապարն է SJSf կառուցվածքը, որտեղ վերջին բաղադրիչը հանդես է գալիս քերականական ձևավորումով. հանդիպում են շառագործող (166) և տիեզերափրկող (59) բարդությունները:

Գրաբարի մակարդակում տարածված մասնակաղապար է SJSf կառուցվածքը, որտեղ սերող պարզ հիմքին բաղադրվում է քերականական ձևավորում ունեցող որևէ բաղադրիչ. հանդիպում են ազգաբան (52)<sup>11</sup>, գաղութայր (33) ((սուրալ բայի 1-ին հիմք), հաւատալսնառ (47) (վաճառեմ բայի 1-ին հիմք), ալաթն (9) (քննեմ բայի 1-ին հիմք) բարդությունները:

Ածանցավոր (երկրորդային) սերող հիմնեով բարդությունները գրաբարում լայն կիրառություն ունեն. այդօրինակ բարդությունների սերող հիմքերը կարող են լինել թե՛ նախածանցավոր, թե՛ վերջածանցավոր:

Ղևոնդի նորակազմությունների մեջ հանդիպում են նախածանցավոր (նախդավոր) հիմքերով հետևյալ բարդությունները՝ ընդարձակահիստ (36), ընդոստախաւս (133), որոնք ներկայացնում են (pS)JSf կառուցվածքը:

Հոդակապով բարդությունների երկրորդ հիմնային բաղադրիչը վերջածանցավոր է, ինչպես՝ զինեղեղյութիւն (115)<sup>12</sup>, այլասկզբունք (66), խոզասպանութիւն (100), որոնք ներկայացնում են հետևյալ կառուցվածքը՝ SJ(Sa):

2) Անհոդակապ բարդություններ: Այս կարգի բարդությունները հիմնակաղապարային կառուցվածքային տեսակներից են և ունեն իրենց մասնակաղապարները: Անհոդակապ բարդությունների կաղապարը ներկայացվում է SS կառուցվածքով, որտեղ գործ ունենք բառակազմական մարտեր հիմքերի համադրման հետ<sup>13</sup>:

<sup>7</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 158:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>9</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 57:

<sup>10</sup> Փակագծում տրվում է Ղևոնդի երկու բառագործածության էջը:

<sup>11</sup> Բարդության երկրորդ բաղադրիչն առանձին լվկաված քաննեմ (<բալ) բայի հիմքն է, որ գտնում ենք ազգաբանեմ բայի մեջ: Մինչդեռ հետագայի լատիներաբան, հայկաբան, հունաբան և նման կազմություններում այն ածանցակերպի արժեք ունի:

<sup>12</sup> ՆՁԹ-ն և ԱԲ-ն այս բարդությունը տալիս են զինեղեղյութիւն ձևով:

<sup>13</sup> Թառակազմական մարտեր և ձևավոր հիմքերի մասին տե՛ս էդ. Աղայան, Հնդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 245: Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 128—131:

Ղևոնդի նորակազմութուններից այս կազմավարին բավարարում է մեհեհայոյց (136) բարդութունը:

Հեղինակային մուս անհողակապ նորակազմութունները հանդես են գալիս SS հիմնակազմավարի հետևյալ տարբերակներով (մասնակազմավարներով):

1) S(Sa)—երկրորդային սերող հիմքն անհանգավոր կազմութուն է՝ սակախիմացութին (61):

2) S(S—տառչնային բաղադրիչի դերով հանդես է գալիս բայահիմքը, ինչպես՝ նախառդի (107), (նախատ—նմ բայի 1-ին հիմք):

3) SS'—երկրորդ բաղադրիչը ևս քերականական ձևավորում ունի. այլիմաց (50) (իմաց < իմանալ բայի 2-րդ հիմք):

4) S(S'a)—երկրորդ բաղադրիչը քերականական ձև է, որին ավելացել է վերջածանց, ինչպես՝ բացընկեցիկ (151), (ընկեց < ընկենում բայի 2-րդ հիմք):

5) S(pSi)—երկրորդային հիմքը քերականական ձև է, որ ունի մթազնած նախդիր-նախածանց (հնչյունական տարբերակով՝ ընդ > ըն, ըմ), ինչպես՝ շարնկալ (128), շարմբեր (128)<sup>14</sup>:

11) Վերլուծական ձևեր: Ղևոնդի նորակազմութունների մեջ հանդիպում են բարդութուններ, որոնք ստեղծվել են հարադրության ուղիով: Հարադրութունը, որպես բառակազմության եղանակի միջոցներից մեկը, ուղեկցում է հայերենին նրա զարգացման հնագույն շրջաններից ի վեր:

Այս եղանակով Ղևոնդն ստեղծել է որոշ ճարտարավոր բայեր, որոնք դիտվում են որպես վերլուծական ձևեր:

Հստ բաղադրիչների լրացական-կախումային հարաբերութունների, բայական հարադրութունները կամ վերլուծական ձևերը համարվում են ստորադասական բարդութուններ<sup>15</sup>:

Այդպիսի բարդութունների արտահայտության պլանում առկա է բայական անդամ, որ հարադրվում է անվանական բաղադրիչին՝ բայական իմաստ հաղորդելով կապակցութայնը: Գրանց բովանդակային պլանում բայական և անվանական հարադրիչները ձևավասարազոր ու համարժեք տարրեր են, որոնք, տարանջատայնությամբ հանդերձ, միահյուսվելով իրար՝ ստեղծում կամ առաջ են բերում բայական մի նոր միավոր<sup>16</sup>: Այդպիսի բարդութունների առաջին բաղադրիչը՝ անվանական միավորը, բայական հարադրութուն համար կատարում է հիմքի, իսկ բայական բաղադրիչը՝ ընթացայնության գաղափարի ցուցիչ դեր:

Ղևոնդի կիրառած բայական նոր հարադրութուններում հանդես են գալիս լինիմ և առնեմ բայերը, որոնք վերացական իմաստ ունեն: Այդ բայերով հարադրվել են հետևյալ բարդութունները, ինչպես՝ ձիւնաճեղձ լինիմ (սձյունով խեղդվել), յուսակորոյս լինիմ (սձուսահատվել), պատուէր առնեմ (սպատվեր՝ հրաման կատարել):

Այս բարդութունների անվանական հարադրիչները բառիմաստի անկախության տեսանկյունից յուրահատկություն են դրսևորում. դրանք անկախ բառեր են կամ կախյալ ձևութներ: Հետևյալ հարադրավոր բարդութունների անվանական հարադրիչները խոսքի մեջ ինքնուրույն գործածություն ունեն:

Հմմտ. յուսակորոյս և յուսակորոյս լինիմ.

Ըս յուսակորոյս սատակ է անդէն ընդ հուպ ի նմին ամի (154): Ըս հայցէին զխնամաւղ ներդուժին նորա հասանել յազնականութիւն տարակուսելոցն և յուսակորոյս եղելոցն ի կենաց աշխարհիս (151):

Պատուէր և պատուէր առնեմ.

Հմմտ. Յայց ի՞՞ գրոց հինգն են արէնք և պատուէր վասն կոոցն հեթանոսաց՝ ոչ պաշտել զնոսա (52): Այլ զայս պատուէր յազգս միոյն առնէ, և որ զորաւորագոյն և դժուարահատաւիսն էր խոսելոց (69):

Ձիւնաճեղձ բառը գրաբար մատենագրության մեջ անկախ գործածությամբ չի հանդիպում. այն գործածվել է Ղևոնդի երկում ձիւնաճեղձ լինիմ հարադրութայն մեջ<sup>17</sup>:

<sup>14</sup> Պարբեր (սգծվարահամբեր, անտանելի, դժվարակիր) բարդութայն 2-րդ բաղադրիչը՝ ըմբեր, համապատասխանում է ըմբերեմ (սհամբերեմ) բայի 1-ին հիմքին և ծագում է ըմբերեմ < ընդ րեմենմ (սքերանը փակել, լսեցնել, ձայնը կտրել) բայից:

<sup>15</sup> Գ. Զաճուկյան, Ժամանակակից հայերենի բառակազմութուն և իմաստաբանություն, էջ 225—227:

<sup>16</sup> Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 70:

<sup>17</sup> Նմանապես բժանեղձ և զեռանեղձ բառերը գրաբարում հանդիպում են միայն իրեն հարադրության բաղադրիչներ, ինչպես՝ բժանեղձ առնեմ (սձյունով՝ բուզով խեղդել), զեռանեղձ առնեմ (սգեղը նետել ու խեղդել): Թինչդեռ նույն հիմքով բաղադրված ջրաճեղձ (սլրի

Այսպիսով՝

1. Ղևոնդի «Պատմութիւն» երկի նորակազմ բարդութիւնները բաժանվում են երկու խմբի՝ ա) համադրական բարդութիւններ՝ հոդակապով և անհոդակապ տեսակներով, բ) վերլուծական ձևեր (բայական հարադրութիւններ):

2. Ղևոնդի երկի նորակազմութիւններն ստեղծվել են գրաբարի բառակազմական սկզբունքներով ու համարանության օրենքով:

Ու. Ու. ԽԱՇԱՏՐՅԱՆ—Лексические новообразования в «Истории» Гевонда Вардапета (модели словосложения).—Лексические новообразования в «Истории» Гевонда Вардапета могут дать определенное представление о семантической структуре словарного состава древнеармянского языка VIII века.

По моделям словосложения Гевонд Вардапет, создал сложные слова синтетического и аналитического типов.

Сложные слова, имеющие соединительный гласный, представляют следующую модель словосложения — SIS (զղեակապարիսպ), которая имеет свои варианты: SIS (բազմախնամ), SIS<sup>i</sup> (շարգործող), (rS)<sub>1</sub>S<sup>i</sup> (ընդարձականիստ), S<sub>1</sub>(Sa) (խոզասպանութիւն).

Сложные слова без соединительного гласного возникли по модели SS (մերենալուզ), которая также имеет свои варианты: S(Sa) (սակալիմացութիւն), S<sup>i</sup>S (նախատորգի), SS<sup>i</sup> (ալիլիւսց), S(Sa<sup>i</sup>) (բացընկեցիկ), S(rS<sup>i</sup>) (շարընկալ).

Аналитические сложные слова образовались с глагольными компонентами լինիմ, առնիմ, ср. ձիւնահեղձ լինիմ, յուսակորոյս լինիմ, պատուէր առնեմ:

Именные компоненты таких сочетаний являются либо независимыми словами (յուսակորոյս, պատուէր), либо зависимыми морфемами (ձիւնահեղձ).

Лексические новообразования в «Истории» Гевонда Вардапета образовались по правилам словообразования древнеармянского языка—по закону аналогии.

մեջ խեղդված», ծովահեղձ («ծովում խեղդված») բարդութիւնները գրաբար մատենագրութեան մեջ գործածվել են թե՛ անկախ բառական և թե՛ հարադրութեան կազմում: